

ԳԼՈՒԽ ԻԹ ԳԵՂԵՑԻԿ ՕՐ

Կ'անգուարի բերդին դմները բացուեցան ընդունելու համար ամենայն պատուով եւ փառօք Գուրգէն Ապուպելճ, եւ Յեղինէ տիկին երկրորդ օրը բերդին եկեղեցուոյն մէջ պսակուեցաւ Գուրգէնի հետ ի մեծ ուրախութիւն Անձեւացեաց ժողովրդեան՝ որ հզօր պաշտպան մը կը գտներ այսպիսի աննման քաջ իշխանի մը հովանաւորութեամբ: Բայց եթէ մէկ կողմէ ամուսնացեալք երջանիկ եւ ժողովուրդը գոհ էին՝ միւսէն շատ մը բանսարկուներ վերջին յուսահատութեան մէջ էին: Մուշեղ իշխանի կտակը պատրաստող Թեոդորոս վարդապետ՝ առաջնորդ Յոգեաց վանից, որ Դերենիկի խորհրդով եւ Նորա յօգուտ ծածուկ Յեղինէի որբ տղան ջանացել էր դրկելու, հիմա անճար եւ շփոթ մնացել էր, իւր բոլոր յոյսերը տեսնելով ոչնչացեալ:

Իսկ Դերենիկ մեծամեծ պատրաստութիւնդ կ'ըներ պատերազմի եւ Նոյն միջոցին Նոյն՝ Թեոդորոս վանահայրը դեսպան կ'ուղարկէր Գուրգէնի՝ սպառնալեօք, որ Անձեւացեաց կեսը Նորաբերդի հետ ըստ կտակին զօրութեան իրեն յանձնէ:

Չենք ուզեր երկայն պատերազմներու վրայ խօսիլ, ուր Գուրգէն վերջապէս յաղթութեամբ պսակուեցաւ, եւ ամբողջ Անձեւացեաց գաւառին տիրացաւ. հանդարտեցուց երկիրը, սպառնուեց ի թշնամեաց, եկեղեցիներ շինեց եւ խաղաղութեան տօն կատարեց Նաւակատեաց:

Բայց այս խաղաղութիւնը նաեւ երկայն չի տևեց, վասնզի Դերենիկի հայրը Աշոտ իշխան գերութենէ ազատելով եկաւ Բաղդատ, եւ հրամայական պատգամ դրկելով Գուրգէնի կը պահանջէր Անձեւացեաց գաւառին մասը Դերենիկի համար: Իսկ Գուրգէն հանդարտ պատասխան կ'ուղարկէր եւ կ'ըսէր. «Յայրենի ժառանգութենէ զիս դրկեցիք, եղբայրական բաժինը յափշտակեցիք, հիմա ինչ որ ինձ աստուած ժառանգեցուց, այն էլ կ'ուզեք առնուլ